Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱԳԾՈՒՄ (2 ԿՆ), ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ (ՄԹ) ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (7.20ՃՆԽ014)**
ECTS կրեդիտ	36 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ձևակերպել հետազոտության արդիականությունը, նպատակը, խնդիրները, մեթոդակարգը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, • ընտրել ուսումնասիրության համար անհրաժեշտ մեթոդակարգը, • հիմնավորել ստացված արդյունքները, վերլուծել դրանք՝ հաշվի առնելով հատուկ գրականության մեջ գրանցված տվյալները, • ներկայացնել կատարված աշխատանքի հաշվետվությունը, ռեֆերատը կամ գիտական հոդվածը, • ցույց տալ գրականության աղբյուրների ինքնուրույն ուսումնասիրության և ամփոփման ունակությունը, *(կարողություններ)* • կատարել աշխատանքը ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիման վրա, • բացահայտել աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, • կատարել հավաքված գիտական նյութի վերլուծություն, • դասակարգել, մշակել և ինքնուրույն ձևակերպել եզրակացությունները, • ներկայացնել ստացված գիտահետազոտական արդյունքները, • մշակել և իրականացնել թեզի գործնական մասի նախագծային առաջարկությունը՝ պահանջվող անհրաժեշտ գծագրերի կազմով, • կատարել ձեռք բերված գիտելիքները գործնական խնդիրների լուծման ժամանակ,

	• բացահայտել ուսումնասիրվող թեմայի հեռանկարային ուղղությունները՝ հետագա հետազոտությունների բա–ցահայտման համար:
Մագիստրոսական թեզի ընթացքի գնահատման փուլերը և պաշտպանության գործընթացի նկարագրությունը	Մագիստրոսական թեզը իրենից ներկայացնում է գիտահետազոտական կամ նախագծային բնույթով աշխատանք, որը պետք է ունենա տեսական կամ գործնական նշանակություն՝ արդի գիտության և տեխնիկայի բնագավառների համար: Դրա նպատակն է բացահայտել ուսանողի գիտական ներուժը, ցույց տալ իր ընդունակությունները ինքնուրույն հետազոտություն կազմակերպելու և կատարելու ժամանակ՝ ժամանակակից գիտական մեթոդների և մոտեցումների օգտագործման, ուսումնասիրվող թեմայի հիմնախնդիրների լուծման, ստացված արդյունքների բացահայտման, եզրակացությունների ձևակերպման և հանձնարարականների մշակման գործընթացում: Մագիստրոսական թեզը ներկայացվում է հրապարակային պաշտպանության, որի ընթացքում քննարկվում են ներկայացված աշխատանքում մշակված առաջարկությունները և հանձնարարականները, կատարվում է աշխատանքի գնահատում 20 միավորային համակարգով՝ հանձնաժողովի անդամների նշանակված գնահատականների միջին թվաբանականի արդյունքով: Մագիստրոսական թեզի կատարման հսկողությունը իրականացնում է ամբիոնը 6 փուլով ատեստավորման միջոցով, ըստ ուսումնական գործընթացի: 3-րդ և 6-րդ փուլերի ավարտին ուսանողը ներկայացնում է հաշվետվություն՝ կուրսային նախագծերի տեսքով: